



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 657

«08» հոկտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյակին ընդառաջ Էջմիածնի քաղաքապետարանի և Մայր Աթոռի նախաձեռնությամբ սեպտեմբերի 25-27-ը Էջմիածնում հայտարարվել էր «Կոմիտասյան օրեր»։ Այդ կապակցությամբ Կոմիտասի անվան հրապարակում խոնարհելու նպատակով ձեռք բերված ծաղկեպսակի համար.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 15.0 հազ. դրամ փոխանցել ա/ծ Կարինե Միրզոյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ *[Signature]* Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 662

«10» հոկտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 2703-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ս. ք. հոկտեմբերի 7-ին տոնվել է Էջմիածին քաղաքի 2703-ամյակը: Միջոցառման համար տպագրված պաստառի ձեռք բերման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 6.5 հազ. դրամ փոխանցել «Բիզնես սթայլ» ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  Դ. ԳԱՄՊՈՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 663

«10» հոկտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 2703-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ս. ք. հոկտեմբերի 7-ին տոնվել է Էջմիածին քաղաքի 2703-ամյակը: Միջոցառումը պատշաճ մակարդակով անցկացնելու նպատակով ձեռք բերված զանբյուրի, վարդերի, գերբերաների ու լոգոտտուսի փնջերի համար:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 91.5 հազ. դրամ փոխանցել ա/ծ Արև Ազատյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  Պ. ՉԱՄՊՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 664

«10» հոկտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՄԱՅՎԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՍԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի հիշատակին մոմավառության և հոգեհանգստի արարողությունն է անցկացվել Էջմիածնի Ամմար կրակ հուշահամալիրում՝ հարգանքի տուրք մատուցելով մեծ հայի հիշատակին: Այդ նպատակով ձեռք բերված մեխակների և ծաղկեպսակի համար.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 33.0 հազ. դրամ փոխանցել ա/ծ Արև Ազատյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  Դ. ԳԱՄՊՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄՍԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 665

« 16 » հոկտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդված պահանջներով, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Սերգեյ Սարգսյանի նախընտրական շտաբի պետ Էմիլ Հովհաննիսյանի իրազեկումը Էջմիածին քաղաքի «Անմար Կրակ» հուշահամալիրի տարածքում 2018թ հոկտեմբերի 19-ին ժամը 18:00-ից մինչև 21:00-ն հանրային հավաք անցկացնելու մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Սերգեյ Սարգսյանի նախընտրական շտաբի պետ Էմիլ Հովհաննիսյանի 15.10.2018թ. Էջմիածին համայնքապետարան մուտքագրված իրազեկումն ընդունելի գիտություն:
2. Սույն որոշման քաղվածքը ներկայացնել իրավասու մարմիններին և փակցնել համայնքապետարանի վարչական շենքում ու տեղադրել կայքէջում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 666

« 16 » հոկտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդված պահանջներով, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Վահե Մովսիսյանի իրազեկումը Էջմիածնի համայնքապետարանի Կոմիտասի անվան մշակույթի պալատ ՀՈԱԿ-ի դիմացի հարթակին 2018թ հոկտեմբերի 19-ին ժամը 15:00-ից մինչև 22:00-ն հանրային հավաք անցկացնելու մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Վահե Մովսիսյանի 15.10.2018թ. Էջմիածին համայնքապետարան մուտքագրված իրազեկումն ընդունել ի գիտություն:
2. Սույն որոշման քաղվածքը ներկայացնել իրավասու մարմիններին և փակցնել համայնքապետարանի վարչական շենքում ու տեղադրել կայքէջում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ղ.ԳԱՄՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 667

« 16 » *[Signature]* 2018թ.

ք.էջմիածին

ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդված պահանջներով, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Սամվել Մուրադյանի իրազեկումը Էջմիածին քաղաքի «Անմար Կրակ» հուշահամալիրի տարածքում 2018թ. հոկտեմբերի 17-ին ժամը 16:00-ից մինչև 19:00-ն հանրային հավաք անցկացնելու մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Սամվել Մուրադյանի 15.10.2018թ. Էջմիածին համայնքապետարան մուտքագրված իրազեկումն ընդունելի գիտություն:
2. Սույն որոշման քաղվածքը ներկայացնել իրավասու մարմիններին և փակցնել համայնքապետարանի վարչական շենքում ու տեղադրել կայքէջում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Դ.ԳԱՄՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 668

« 16 » հոկտեմբեր 2018թ.

ք.Էջմիածին

ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդված պահանջներով, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Դիանա Գասպարյանի իրազեկումը՝ Էջմիածին քաղաքի Կոմիտասի անվան հրապարակում 2018թ. հոկտեմբերի 18-ին ժամը 17:00-ից մինչև 20:00-ն հանրային հավաք անցկացնելու և ավարտից հետո Սբ.Մ.Մաշտոցի պողոտայով քայլերք կատարելու մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Դիանա Գասպարյանի 15.10.2018թ. Էջմիածին համայնքապետարան մուտքագրված իրազեկումն ընդունել ի գիտություն:
2. Սույն որոշման քաղվածքը ներկայացնել իրավասու մարմիններին և փակցնել համայնքապետարանի վարչական շենքում ու տեղադրել կայքէջում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 669

26 հոկտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով «<Վռամ - Ալբերտ>> ՍՊԸ-ի տնօրեն Ռազմիկ Այվազյանի դիմումը, խանութը երկու մասերի բաժանելու մասին պարզվել է.

Էջմիածին քաղաքի, Վ. Կոստանյան փողոցի թիվ 5 շենքի առաջին հարկում գտնվող խանութը սեփականության իրավունքով /վկայական N 053491 / պատկանում է «<Վռամ - Ալբերտ>> ՍՊԸ-ին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Աստղիկ Մանուկյան » ԱԶ /վկայական թիվ 096/ կողմից հաստատված հատակագծերը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Վ.Կոստանյան փողոցի թիվ 5 շենքի առաջին հարկում գտնվող խանութի 65.3քմ մակերեսով մասին /որից 9.0 քմ ինքնական կառուցած/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Վ.Կոստանյան փողոց թիվ 5/71, 97.7քմ մակերեսով մասին /որից 14.6 քմ ինքնական կառուցած/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Վ.Կոստանյան փողոց թիվ 5/72 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. Արշակյան Դ. ԳԱՍՊՈՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 670

16 հոկտեմբեր 2018թ.

ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Լիլիկ Կարապետյանի դիմումը բնակելի տունը բաժանելու մասին պարզվել է. Էջմիածին քաղաքի, Սբ.Մ.Խորենացի փողոցի թիվ 52 հասցեում գտնվող տան մի մասը պատկանում է Արթուր, Ռոմելա և Արմենուհի Պողոսյաններին /հիմք՝ 25.10.2016թ. վճիռ Քաղ.գործ թիվ 1/0636/02/16 /:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան » ԱԶ /վկայական թիվ 0244/ կողմից հաստատված հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Խորենացի փողոցի թիվ 52 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 0.0066 հա մակերեսով մասին /որից 0.0041 ընդհանուր օգտագործման տարածք/ բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Խորենացի փողոց թիվ 52/1 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ղ. ԳԱՄՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 67

16 հոկտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Իշխան Իսպիրյանին պատկանող բնակելի տանը /հիմք՝ վկայական 722632/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Պետրոզավոդսկ փողոց թիվ 62/1 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Պ. ԳԱՄՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 672

16 հոկտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի, Իսակովի փողոցի թիվ 44/1 տան բնակիչ Հարություն Խաչիկյանի դիմումը բնակելի տունը բաժանելու մասին պարզվել է.

Էջմիածին քաղաքի, Իսակովի փողոցի թիվ 44/1 հասցեում գտնվող տունը սեփականության իրավունքով /վկայական 11092018-04-0043/ պատկանում է Հարություն Խաչիկյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Աստղիկ Մանուկյան» ԱԶ /վկայական թիվ 096/ կողմից հաստատված հատակագծերը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՍ

1. Էջմիածին քաղաքի Իսակովի փողոցի թիվ 44/1 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 0.0260 հա մակերեսով մասին /որից 0.113 հա ընդհանուր օգտագործման տարածք/ բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Իսակովի փողոց թիվ 44/1, 0.0253 հա մակերեսով մասին /որից 0.0113 հա ընդհանուր օգտագործման տարածք/ բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Իսակովի փողոց թիվ 44/2 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝  Ղ. ԳԱՄՄԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 673

16 հոկտեմբեր 2018թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Խաչիկ Վարդապետյանին պատկանող անշարժ գույքին /հինք՝ տեխ. անձնագիր տրված 13.10.1988թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Կնունյանց փողոց թիվ 23/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՍՏՆԱԿԱՍԱՐ՝ Ռ. ԳԱՍՊՈՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 674

« 17 » հոկտեմբեր 2018թ.

ք.Էջմիածին

ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդված պահանջներով, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Սուրեն Ալբերտի Սուրադյանի իրազեկումը՝ Էջմիածին քաղաքի Կոմիտասի անվան հրապարակում 2018թ. հոկտեմբերի 19-ին ժամը 18:00-ից մինչև 22:00-ն հանրային հավաք անցկացնելու մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Սուրեն Ալբերտի Սուրադյանի 17.10.2018թ. Էջմիածին համայնքապետարան մուտքագրված իրազեկումն ընդունելի գիտություն:

2. Սույն որոշման քաղվածքը ներկայացնել իրավասու մարմիններին և փակցնել համայնքապետարանի վարչական շենքում ու տեղադրել կայքէջում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 675

« 17 » հոկտեմբեր 2018թ.

ք.Էջմիածին

ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդված պահանջներով, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Սուրեն Ալբերտի Մուրադյանի իրազեկումը՝ Էջմիածին քաղաքի Կոմիտասի անվան հրապարակում, Կոմիտասի արձանի մոտ 2018թ. հոկտեմբերի 17-ին ժամը 18:00-ից մինչև 22:00-ն հանրային հավաք անցկացնելու մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին համայնքի ղեկավարի թեկնածու Սուրեն Ալբերտի Մուրադյանի 16.10.2018թ. Էջմիածին համայնքապետարան մուտքագրված իրազեկումն ընդունելի գիտություն:
2. Սույն որոշման քաղվածքը ներկայացնել իրավասու մարմիններին և փակցնել համայնքապետարանի վարչական շենքում ու տեղադրել կայքէջում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ ԵԴԵ

17 հոկտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Հրաչյա Քոչարյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ սեփ. վկայական 2169267/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Սաշտոց փողոց թիվ 16/96 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  Դ. ԳԱՍՊՐՈՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 078

« 17 » հոկտեմբեր 2018թ.

ք.Էջմիածին

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՍՈՐՔԻ ԼԱՅՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՓՈԽԱՂՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 44 հոդվածի առաջին մասի 3-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16 թիվ 762 որոշման կարգի 4-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածին համայնքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ անցկացնելու նպատակով կազմավորել հանձնաժողով հետևյալ կազմով, համաձայն հավելվածի:
2. Մրցութային հանձնաժողովին՝ մրցույթն իրականացնել ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման կարգի պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատված

Էջմիածնի համայնքի ղեկավարի պաշտոնակատարի
2018թ. հուլիսի 17 թիվ 678 որոշմամբ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Էջմիածին համայնքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ անցկացնելու նպատակով կազմավորված

հանձնաժողովի նախագահ՝ Արգիշտի Մեխակյան /Էջմիածին համայնքի ղեկավարի տեղակալ/.

հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Արծրուն Ֆահրադյան /ԲԿՎ-ի համայնքային գույքի գույքագրման բացօթյա առևտրի և տրանսպորտի կանոնակարգման բաժնի պետ /

անդամներ՝ Դավիթ Բադայան /Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հող օգտագործման բաժնի պետ/.

Գևորգ Ղազարյան /Էջմիածին համայնքի ավագանու անդամ/
Արթուր Փարսադանյան /ՀՀ Ոստիկանության ՃՈ ՀՔ և ՏՍՏՓ բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ/.

Դավիթ Մելքոնյան /ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն նախարարության ներկայացուցիչ տրանսպորտի վարչության փոխադրումների քաղաքականության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ/.

Հովհաննես Էքիզյան /ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ/.

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄԹԻՎ 679

17 հունիս/2018թ. 2018թ.

ք.Էջմիածին

ԷԶՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 10.07.2018թ. ԹԻՎ 383 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների և «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքապետի 10.07.2018թ. «Շինության գործառնական նշանակությունը, հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և բաժանելու մասին» թիվ 383 որոշման մեջ կատարել լրացում.
2. Որոշման առաջին կետի «Էջմիածին քաղաքի Մարգարայի խճուղու վրա գտնվող վարչական շենքի» բառերից հետո լրացնել «անասնաշենքի և թռչնանոցի» բառերով:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ս.Ս. Գևորգյան Դ.ԳԱՄՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 680

17 հոկտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Հայկ Բարսեղյանին պատկանող բնակելի տանը /հիմք՝ սեղ.մատյան 6530, 6531/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին փողոց թիվ 88/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝





**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

« 17 » հոկտեմբեր 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 681

ք.Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Հ.Հակոբյան փողոցի թիվ 30 տան բնակիչ Սոնյա Մովսեսի Ավագյանի դիմումը պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 05.06.1997թ տրված հողամասի առուժախի պայմանագիրը գրանցված թիվ 1-2299 սեղանամատյանում և «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /վկայական թիվ 0244/ կողմից տրված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 32 հասցեում գտնվող 480քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 4քմ կառուցապատ մակերեսով պարիսպը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 32 հասցեում գտնվող 480քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 4քմ կառուցապատ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված 4քմ մակերեսով պարիսպի համար սահմանված 12800 /տասներկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Հողամասին շինությունով տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 31:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄԹԻՎ *682*

17 հունիսի 2018թ. 2018թ.

ք.Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՇԵՆՔԻ ԹԻՎ 31 ԵՎ ԹԻՎ 35 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՍ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ԴՈՒՐ, 1 ԲԱՑՎԱԾՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈՓՈԽՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Օրջոնիկիձե փողոցի թիվ 16 տան բնակիչ Արմեն Իգնատի Ներսիսյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն, սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայականներ թիվ 737560 տրված 16.12.2002թ., 09122016-04-0033 տրված 09.12.2016թ. և «Կարեն Մաչանյան» ԱԶ-ի /վկայական թիվ 0244/ կողմից տրված չափագրությունը/ Էջմիածնի քաղաքի Վազգեն Առաջին փողոցի թիվ 3 շենքի թիվ 31 և 35 հասցեներում գտնվող բնակարանները միավորելու, ինքնակամ բացված թվով 1 դուռը և 1 բացվածքը օրինականացնելու, բնակարանի գործառնական նշանակությունը՝ հասարակականի, իսկ օգտագործման նպատակը ատամնաբուժարանի փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման կարգի 34-րդ և 48-րդ կետերի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքի Վազգեն Առաջին փողոցի թիվ 3 շենքի թիվ 31 և 35 հասցեում գտնվող բնակարանները միավորել և նորամադրել հասցե՝ ք.Էջմիածին Վազգեն Առաջին փողոց թիվ 3 շենք թիվ 31,35 բնակարան:
2. Էջմիածնի քաղաքի Վազգեն Առաջին փողոց թիվ 3 շենք թիվ 31,35 բնակարանի ինքնակամ բացված թվով 1 դուռը և 1 բացվածքը ճանաչել օրինական:
3. Ինքնակամ բացված թվով 1 դռան և 1 բացվածքի համար սահմանված 6400 /վեց հազար չորս հարյուր / ՀՀ դրամ վճարը 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. Էջմիածնի քաղաքի Վազգեն Առաջին փողոց թիվ 3 շենք թիվ 31, 35 բնակարանի գործառնական նշանակությունը բնակելիից փոփոխել հասարակական գործառնական նշանակության, իսկ օգտագործման նպատակը՝ ատամնաբուժարանի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
5. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
6. Էջմիածնի քաղաքի Վազգեն Առաջին փողոց թիվ 3 շենք թիվ 31,35 բնակարանը ոչ բնակելի տարածքի փոփոխելու կապակցությամբ հանել բնակարանային ֆոնդից:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ս. Ա. Կարենյան* Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 683

[Signature] 2018թ.

ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆՂԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՂՈՒԱՐԴ ՈԱՖԻԿԻ ՀԱՋԻՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Մայակովսկի փողոցի թիվ 2 տան բնակիչ Էդուարդ Ռաֆիկի Հաջիյանի լիազորված անձ դիմումը՝ պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 18.09.2018թ. տրված թիվ 5960 և 5961 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը/, Էջմիածին քաղաքի Մայակովսկի փողոցի թիվ 2 հասցեում գտնվող 387քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Մայակովսկի փողոցի թիվ 2 հասցեում գտնվող 387քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Էդուարդ Ռաֆիկի Հաջիյանի /ծնված 06.05.1961թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ *[Signature]* Դ. ԳԱՄՊՈՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 684

18 հունվարի 2018թ.

ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ԵՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԳՈՒԷ ՄԿՐՏԶԻ ԱՂԱԶԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոց փողոցի թիվ 18 շենքի թիվ 64 բնակարանի բնակիչ Մարգուշ Մկրտչի Աղաջանյանի դիմումը՝ պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 04.04.1991թ. տրված տեխնիկական անձնագիրը/, Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող 283քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող 283քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Մարգուշ Մկրտչի Աղաջանյանի /ծնված 09.10.1939թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 685

18 *[Signature]* 2018թ.

ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, 0545-0018 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Չարենց 1-ին թաղամաս թիվ 237 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ *[Signature]* Ղ. ԳԱՄՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 686

19 հոկտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Կարապետ Մելքոնյանի դիմումը անշարժ գույքը բաժանելու մասին պարզվել է, Էջմիածին քաղաքի, Շահումյան փողոցի թիվ 75/7 հասցեում գտնվող շինությունները սեփականության իրավունքով /վկայական N 05092018-04-0057 / պատկանում է Կարապետ Մելքոնյանին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱԶ /վկայական թիվ 0244/ կողմից հաստատված հատակագծերը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Շահումյան փողոցի թիվ 75/7 հասցեում գտնվող շինությունների գրադեցրած հողամասի 0.9055 հա մակերեսով մասին շինություններով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Շահումյան փողոց թիվ 75/7, 0.061 հա մակերեսով մասին շինությունով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Շահումյան փողոց թիվ 75/16 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ  Դ. ԳԱՄՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

19 հոկտեմբեր 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 627

բ.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԶՊԱՀՊԱՆՎԱԾ
ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆՂԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱԳԻԿ ԵՎ ԱԼԲԵՐՏ ՌՈՒԲԻԿԻ ԻՐԱՂՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով էջմիածին քաղաքի Մ.Մելիսյան փողոցի թիվ 1 տան բնակիչ Գագիկ Ռուբիկի Իրադյանի դիմումը պարզվել է, որ.

- Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 29.09.2018թ. տրված թիվ 6871 և 6872 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, էջմիածին քաղաքի Մ.Մելիսյան /Նախկին Չերժինսկի/ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Գագիկ և Ալբերտ Ռուբիկի Իրադյաններին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 423քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 105քմ սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Մ.Մելիսյան /Նախկին Չերժինսկի/ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 105քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Գագիկ /ծնված 05.09.1974թ./ և Ալբերտ /ծնված 27.03.1966թ./ Ռուբիկի Իրադյանների սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Պ.ԳԱՍՊՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 688

22 2018թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ «ԷԶՄԻԱԾԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԾՆՆԴԱՏԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ
ԴԻՄԱՑ ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՀՄԱՆԱՆԻՇԵՐԸ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔԸ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 2/1 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի «Էջմիածնի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի դիմաց հողօգտագործման սահմանանիշերը ոչնչացնելու համար տուգանքը նշանակելու մասին, պարզեց որ

Հայրիկ Գեղամի Սարգսյանը (հասցե՝ Արարատի մարզ, Կանաչուտ գյուղ, Ա. Սարգսյան փողոց, թիվ 18 տուն, ն/ք 000941989), Էջմիածին քաղաքի «Էջմիածնի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի դիմաց խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան իրավասու մարմինների համաձայնության, իրականացրել է հողօգտագործման սահմանանիշերի ոչնչացման աշխատանքներ, ապամոնտաժելով եզրաքարերը և դրանց կից, որպես աստիճաններ ծառայող քարերը, որոնք փաստորեն հանդիսացել են սահմանանիշ տրանսպորտի երթևեկությունը այդ մասում սահմանափակելու համար, ինչի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, ինչի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի և ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետի գրությունների հիման վրա Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի 31.08.2018թ. արձանագրության հիման վրա 2018 թվականի սեպտեմբերի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը /այսուհետ՝ հանձնաժողով/ հրավիրել և անցկացրել է լսում Հայրիկ Գեղամի Սարգսյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

• ՀՀ Արմավիրի մարզպետի և ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետի գրությունների հիման վրա Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի «Էջմիածնի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի տարածքում հայտնաբերված հողօգտագործման սահմանանիշերը ոչնչացնելու կապակցությամբ 31.08.2018թ. կազմված արձանագրությունը ու տեղագնությունն ակտը:

• Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից 04.09.2018թ. թիվ 1522 գրությամբ Հայրիկ Գեղամի Սարգսյանը նախազուգացվել է հողօգտագործման սահմանանիշերը

վերականգնելու մասին: Լրացուցիչ կատարված տեղատեությունը պարզվել է, որ քաղաքացի Հայրիկ Գեղամի Սարգսյանի կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել սահմանանիշները վերականգնելու ուղղությամբ:

• Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

1. Արարատի մարզի, Կանաչուտ գյուղի, Ա. Սարգսյան փողոցի, թիվ 18 տան բնակիչ Հայրիկ Գեղամի Սարգսյանի կողմից, Էջմիածին քաղաքի <<Էջմիածին բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի դիմաց, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան իրավասու մարմինների համաձայնության, իրականացվել է հողօգտագործման սահմանանիշերի ոչնչացման աշխատանքներ, ուստի քննարկվող արարքը հանդիսանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտման հիմքեր պարունակող իրավախախտում.

2. Էջմիածին քաղաքի <<Էջմիածին բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի դիմաց գտնվող հողամասը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված է <<Էջմիածին բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ին, սակայն հանդիսանում է համայնքի սեփականությունը: Հողամասի հատակագիծը և նկարագրությունը, սահմանանիշերի տեղադրումը կատարվել են հողամասն ստացողի միջոցների հաշվին: Նշված տարածքում անցկացվել են սահմանանիշեր, որպեսզի սահմանափակվի տրանսպորտի երթևեկությունը այդ մասում և դրա շնորհիվ ապահովվի հիվանդանոցի այցելուների անվտանգ տեղաշարժը տարածքում, տարանջատելով երթևեկելի մասը հետիոտնի համար նախատեսված հատվածից:

Փաստորեն Հայրիկ Գեղամի Սարգսյանը 2018թ-ի օգոստոսի 8-ին ժամը 20:30-ին առանց որևէ օրենքով սահմանված թույլտվության, ապօրինի կարգով, շինարարական տեխնիկայով քանդել է <<Էջմիածին բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի ծննդատան մասնաշենքի դիմաց գտնվող եզրաքարերը և դրանց կից, որպես աստիճաններ ծառայող քարերը, փակ ճանապարհը փորձելով դարձնել անցանելի մեքենաների համար, որը մեծ վտանգ է ներկայացնում հիվանդանոցի այցելուների համար, ինչի մասին եղել է նաև <<Էջմիածին բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենի ահազանգը:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2018 թվականի սեպտեմբերի 12-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 հոկտեմբերի 4-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 12.09.2018թ.-ի փոստ. անդորրագիր AG011533535AM/ քաղաքացի Հայրիկ Գեղամի Սարգսյանը:

Վերջինս ներկայանալով վարչական վարույթի լսումներին, հայտնել է, որ իր արարքը չի համարում իրավախախտում ու գտնում է որ սահմանանիշը դժվարեցրել է հիվանդանոցի այցելուների մուտքը հիմնարկ:

Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել՝ վարույթի մասնակից Հայրիկ Գեղամի Սարգսյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ 30 000 / երեսուն հազար /ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես պետության պատվիրակված լիազորություն, օրենքով սահմանված կարգով ապահովում է համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում՝ հրապարակման պահից, azdarar.am-ի կամ քաղաքապետարանի տեղեկագրում հրատարակելու միջոցով:

ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ղ.ԳԱՍՊԱՐՅԱՆ





ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 696

22 հունիսի 2018թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾԻ ԶԱՆԳՎԱԾ, ԹԻՎ 16 ՇԵՆՔ, ԹԻՎ 92 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՍ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱՊՈՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 1/3 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված ինքնակամ շինությունը քանդելու, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու և վարչական իրավախախտման համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

Սեյրան Սոյոպայի Եսայանը (հասցե ք. Էջմիածին, Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բն., անձնագիր AN 0506643), Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, իրականացրել է ապօրինի շինության կառուցման շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի 26.07.2018թ. արձանագրության հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լուսն Սեյրան Սոյոպայի Եսայանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող շենք-շինությունների, ճանապարհների ու փողոցների հերթական ուսումնասիրության ժամանակ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինության կապակցությամբ 26.07.2018թ. կազմված արձանագրությունը ու տեղազնության ակտերը:
 - Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից 25.07.2018թ. թիվ 1065 գրությամբ Սեյրան Սոյոպայի Եսայանը նախագուշացվել է, շինարարական աշխատանքների դադարեցման մասին: Լրացուցիչ կատարված տեղատեսությամբ պարզվել է, որ քաղաքացի Սեյրան Սոյոպայի Եսայանի կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել ինքնակամ շինարարությունը դադարեցնելու և Էջմիածնի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու ուղղությամբ:
 - Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:
 - Հանձնաժողովի 22.08.2018թ. թիվ 3 արձանագրությունը:
- Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանի բնակիչ Սեյրան Ստյոպայի Եսայանի կողմից Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում իրականացվել է ինքնակամ շինության կառուցման շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կատարված իրավախախտման հետևանքները վերացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը առաջարկել է քաղաքացի Սեյրան Ստյոպայի Եսայանին իր նախաձեռնությամբ և սեփական միջոցներով քանդել ինքնակամ կառույցը և ազատել ապօրինի տիրապետումից Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը, քանի որ, հիշյալ ինքնակամ կառույցը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N912-Ն որոշման շրջանակներում ենթակա չէ օրինականացման:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2018 թվականի հուլիսի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 օգոստոսի 22-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 30.07.2018թ.-ի փոստ. անդորրագիր AG010435934AM/ քաղաքացի Սեյրան Ստյոպայի Եսայանը:

Սեյրան Ստյոպայի Եսայանը, ներկայանալով վարչական վարույթի լսումներին, հայտնել է, որ կքանդի ինքնակամ շինությունը և հողամասը կրեթի նախկին տեսքի:

Սեյրան Ստյոպայի Եսայանին տրվել է ժամանակ իր հայտարարությամբ նշված համապատասխան գործողություններ կատարելու համար, սակայն քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից 03.10.2018թ. կատարված ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ Սեյրան Ստյոպայի Եսայանի կողմից Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կատարված ինքնակամ շինությունը ամբողջությամբ չի քանդվել:

Արդյունքում Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել

1. վարույթի մասնակից Սեյրան Ստյոպայի Եսայանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով՝ 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, համայնքի ղեկավարին առաջարկել՝ Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինությունը /պատսգամբի հարթակ/ համարել Էջմիածնի համայնքի սեփականությունը:

3. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ կետով, առաջարկել Սեյրան Ստյոպայի Եսայանին հատուցել Էջմիածնի համայնքին հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

4. Նախագրուշացնել Սեյրան Ստյոպայի Եսայանին, որ տուգանք նշանակելուց հետո, ապօրինի շինարարական աշխատանքներ շարունակելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ

քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակալված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք է օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի <<ա>> կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում Սեյրան Ստյոպայի Եսայանը Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն:

Այսինքն՝ Սեյրան Ստյոպայի Եսայանը կատարել է առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասին 3-րդ կետի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա) կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սեյրան Ստյոպայի Եսայանի նկատմամբ նշանակել տուգանք 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով՝ Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:

2. Չօրինականացնել Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի կառուցված ինքնակամ կառույցը:

3. Էջմիածին քաղաքի Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում Սեյրան Ստյոպայի Եսայանի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառուցված ինքնակամ կառույցը քանդել:

4. Նախագրուշացնել Սեյրան Ստյոպայի Եսայանին, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո, ապօրինի շինարարական աշխատանքները շարունակելու դեպքում Վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

5. Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցներին և Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինությանը, քանդել ինքնակամ կառույցը և ապօրինի տիրապետումից ազատել Էջմիածին համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետին, սույն որոշման 5-րդ կետի համաձայն Էջմիածնի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

7. Հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին, սույն որոշման 5-րդ կետով նախատեսված վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու դեպքում, Արագածի զանգված, թիվ 16 շենք, թիվ 92 բնակարանին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված ինքնակամ կառույցի քանդման և դրան առնչվող բոլոր աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը դատական կարգով բռնագանձել Սեյրան Ստյոպայի Եսայանից:

8. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

9. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

10. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դատնալուց հետո եռամսյա ժամկետում:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿՍԱՐ



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Թ Ի Վ 697

29 հոկտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 41 ՇԵՆՔԻ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՍ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 2/2 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված ինքնակամ շինարարության իրականացման համար նախատեսված կարգով տուգանք նշանակելուց հետո շինարարական աշխատանքները շարունակելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ

Գեորգի Մանվելի Սայադյանը (հասցե՝ ք. Էջմիածին, Լուսնոսով փողոցի թիվ 1 փակուղի, թիվ 10 տուն, ն/ք 004147476), Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, իրականացրել է ապօրինի շինության կառուցման շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով Էջմիածնի համայնքի ղեկավարի 04 սեպտեմբերի 2018թ. թիվ 512 որոշմամբ նշանակվել է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի 11.09.2018թ. արձանագրության հիման վրա 2018 թվականի սեպտեմբեր 20-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման ղեկավարով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում Գեորգի Մանվելի Սայադյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

• Էջմիածին քաղաքի վարչական սահմաններում գտնվող շենք-շինությունների, ճանապարհների ու փողոցների հերթական ուսումնասիրության ժամանակ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող տարածքում հայտնաբերված ինքնակամ շինարարական աշխատանքների համար տուգանք նշանակելուց հետո դրանք շարունակելու կապակցությամբ 11.09.2018թ. կազմված արձանագրությունը ու տեղագնություն ակտերը:

• Էջմիածնի համայնքի ղեկավարի 04 սեպտեմբերի 2018թ. <<Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի հարակից հատվածում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կառուցված ինքնակամ շինությունը քանդելու, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու և վարչական իրավախախտման համար տուգանք նշանակելու մասին>> թիվ 512 որոշումը:

• Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Էջմիածին քաղաքի, Լոմոնոսով փողոցի թիվ 1 փակուղի, թիվ 10 տան բնակիչ Գեորգի Մանվելի Սայադյանի կողմից, Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում իրականացվել է ինքնակամ շինության կառուցման շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի: Այդ կապակցությամբ 2018թ. հուլիսի 30-ին հարուցվել է վարչական վարույթ, որը ավարտվել է վարչական ակտի կայացմամբ, համաձայն որի Գեորգի Մանվելի Սայադյանի նկատմամբ նշանակվել է տուգանք Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար, 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում կատարված իրավախախտման հետևանքները վերացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը առաջարկել է քաղաքացի Գեորգի Մանվելի Սայադյանին իր նախաձեռնությամբ և սեփական միջոցներով քանդել ինքնակամ կառույցը և ազատել ապօրինի տիրապետումից Էջմիածին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը, քանի որ հիշյալ ինքնակամ կառույցը ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N912-Ն որոշման շրջանակներում ենթակա չէ օրինականացման: 11.09.2018թ-ին Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից կատարվել է Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող տարածքի ուսումնասիրություն և պարզվել, որ չնայած նշանակված տուգանքի և նախազուշացման առ այն, որ եթե նա համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակելուց հետո, շարունակի իրականացնել շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նրա նկատմամբ կկիրարկվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ, Գեորգի Մանվելի Սայադյանը շարունակել էր ապօրինի շինարարական աշխատանքները:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2018 թվականի հուլիսի սեպտեմբերի 20-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 հոկտեմբերի 4-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 20.09.2018թ.-ի փոստ. անդորրագիր AG011533527AM/ քաղաքացի Գեորգի Մանվելի Սայադյանը:

Վերջինս, պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել մասնակից Գեորգի Մանվելի Սայադյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի <<ա>> կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով

հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում Գեորգի Մանվելի Սայադյանը Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն և նշված արարքի համար տուգանքի ենթարկվելուց հետո ևս դրսևորելով ոչ իրավաչափ վարքագիծ՝ շարունակելով ապօրինի շինարարությունը:

Այսինքն՝ Գեորգի Մանվելի Սայադյանը կատարել է առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վրա և այն շարունակել տուգանք նշանակելուց և նախագգուշացվելուց հետո:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի երկրորդ մասին համաձայն՝ նշված հոդվածի առաջին մասով նախատեսված արարքներ կատարել շարունակելը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգով տուգանք նշանակելուց հետո՝

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա) կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գեորգի Մանվելի Սայադյանի նկատմամբ նշանակել տուգանք 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով՝ Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փողոց, թիվ 41 շենքի բակում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար տուգանք նշանակելուց հետո նույն արարքը կատարել շարունակելու համար:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

**ԷԶՄԻԱՏՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**



Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷԶՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

« 22 » հոկտեմբեր 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 698

ք. Էջմիածին

**ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ
ՊԱՀԱՆՁԻ ՄԱՍԻՆ**

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 6/1 վարչական գործը՝ հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու պահանջի մասին, պարզեց որ ք. Էջմիածին, Անդրանիկ փ. 165 հասցեում բնակվող քաղաքացիներ Գոհարիկ Օհանյանը /ւ/ք 001681444/ և Սուրեն Օհանյանը /անձ. AN0234466/ հանդիսանալով հողի հարկի վճարող սուբյեկտներ «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ վճարելու իրենց պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 06.09.2018թ. տեղեկանքի հիման վրա 2018 թվականի սեպտեմբերի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի հարկային պարտավորությունների և պարտադիր վճարումների իրավախախտումների դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով հրավիրել և անցկացրել է լսում Սուրեն Օհանյանի մասնակցությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի կողմից տրված տվյալների /հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության ամփոփ ցուցակից քաղվածք/ ք. Էջմիածին, ԳՏԿ հասցեով գտնվող 1.5հա, մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը հանդիսանում է քաղաքացիներ Գոհար Օհանյանի և Սուրեն Օհանյանի համատեղ սեփականությունը, ինչը «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 445 574 /չորս հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ, որը չի վճարվել մինչ օրս, որից 295 216 /երկու հարյուր ինսունհինգ հազար երկու հարյուր տասնվեց/ ՀՀ դրամը 2011-2017թթ. համար ապառքի գումար և 150 358 / հարյուր հիսուն հազար երեք հարյուր հիսունուր/ ՀՀ դրամը 2010-2017թթ. համար հաշվարկված տույժերի գումարը:

2018 թվականի սեպտեմբերի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի հոկտեմբերի 9-ին հրավիրվել էին վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով

պատշաճ ծանուցվել են/հիմք փոստային անդորագիր AG 011526764AM/ քաղաքացների Գոհարիկ Օհանյանը և Սուրեն Օհանյանը:

Գոհարիկ Օհանյանը չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պատշաճ ծանուցման վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լուսմներին:

Լուսմներին ներկայացավ Սուրեն Օհանյանը և հայտարարեց, որ կներկայացնի տեղեկանք ՀՀ ԿՍ ԱԳԿ-ին տեսչությունից գույքի գնահատման վերաբերյալ, քանի որ համաձայն չէ գույքի գնահատման և դրա հետևանքով հաշվարկված հողի հարկի չափի հետ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր որ պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

խտրականության բացակայություն՝ հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից.

համապարտադիրություն՝ բոլոր հարկ վճարողները պարտավոր են Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, կարգով և չափով հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ.

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային գուտ եկամուտը:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3րդ և 4-րդ կետերի՝ Էջմիածնի համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ ենթակետի՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

ՀՀ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 14 կետի համաձայն, որպես լիազոր մարմին՝ օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող հանդես է գալիս պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը.

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի

ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հարկային իրավախախտման համար կիրառվող հարկային պատասխանատվության տեսակներից է տույժը:

Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-2-րդ, ՀՀ Հարկային օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիներ Գոհար Օհանյանից և Սուրեն Օհանյանից համապարտության կարգով հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել՝ 445 574 /չորս հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ՝ որից 295 216 /երկու հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր տասնվեց/ ՀՀ դրամը 2011-2017թթ. համար ապառքի գումար և 150 358 / հարյուր հիսուն հազար երեք հարյուր հիսունութ/ ՀՀ դրամը՝ 2010-2017թթ. համար հաշվարկված տույժերի գումարը:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածին համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ քաղաքապետարանի տեղեկագրում հրատարակելու միջոցով:

ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

